Արձանագրություն N 4
ՀՀ ՈԿ-ԳՀԱՊՁԲ-18/4 ծածկագրով ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

19 ապրիլի 2018թ
ժամը 14:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Մ. Մուրադյանը
անդամներ՝ Ս. Գասպարյանը, Լ.Սարգսյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

I. Ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների մասին

(Մ. Մուրադյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

Հրավերով սահմանված ժամկետում «Սուր Արթուր» ՍՊԸ-ն, «Սեմանգ» ՍՊԸ-ն, «Սենդա» ՍՊԸ-ն, «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ն հանձնաժողովին են ներկայացրել հրավերի 2-րդ բաժնի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը: Մասնակիցների և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստաթղթերը և գնահատման թերթիկները տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի հրավերով սահմանված պահանջի առկայության վերաբերյալ եզրակացությունը, ըստ որի մասնակիցների ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց ներկայացված փաստաթղթերը՝ մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը և գնահատման արդյունքում՝ հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Հիմք ընդունելով հանձնաժողովը անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները հանձնանաժողովը որոշեց «Սուր Արթուր» ՍՊԸ-ի, «Սեմանգ» ՍՊԸ-ի, «Սենդա» ՍՊԸ-ի, «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

4. Ներկայացված գնային առաջարկի և գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց.

ա/ «Սուր Արթուր» ՍՊԸ -ին ընտրված մասնակից ճանաչել՝ 4-րդ չափաբաժնի համար:

բ/ «Սեմանգ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչել՝ 2-3-րդ, 8-9-րդ, 12-րդ, 19-րդ չափաբաժինների համար:

գ/ «Սենդա» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչել՝ 15-րդ չափաբաժնի համար:

դ/ «ՖՈՏՈՆ» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել 1-ին, 5-7-րդ, 10-11-րդ, 14-րդ, 16-18-րդ 20-րդ, 21-րդ չափաբաժինների համար:

Ընտրված մասնակիցներ են ճանաչվել որպես բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցների թվից, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Մ. Մուրադյան)

5. Հանձնաժողովը որոշեց.

ա/ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրա հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Մ. Մուրադյան

անդամներ՝ _____ Ս. Գասպարյան

_____ Է.Սարգսյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան